ՃԿԳ.

Ուլթաններու քաղաքի վերոյիշեալ լուրջ դէպքերու պատմութեան ուրիշ աղբիւր մը կը ներկայանայ մեզ Ասկէրեանի հետևեալ նամակը։

Ամենապատիւ և գերյարգոյ Հօր մերոյ
Ստեփաննոսի Բարձրագոյն Պատրիարքի և Աբրահոր մեծի

... Գերապայծառ մինասայ Արհեպիսկոպոսին մերոյ խոնարհութեամբ զաջսն համբուրելով ողջոյն մատուցանեմ...։ Պատմի ասէին, թէ ի Կոստանդնուպոլիս յաւուրս պայրամին եղեալ է խռովութիւն բազում, սպանեալ են զսիւլէյման աղայ զուրացողն, որ իբրև երկրորդ արքայ տիրացեալ էր ի վերայ երկրին, և զհամախոհ նորա զխըզլար աղասըն և զեախուպ աղան ևս. այլ թէ վասն որոյ իրաց, այսպէս պատմեաց որդի աւէտ աղային ասվատուրն։ Վասն կարի իմն զօրանալոյ սիւլէյման աղային, թիկունս ունելով զնա պօստանճիք, բազում յանդգնութիւն գործէին, լուեալ թէ ոմն յիւրեանց ի կալանս է յիսկուտար առ իշխանի տեղւոյն, չոգան առնուլ բռնութեամբ. յընդդէմ դառնալ իշխանին, հարին վիրաւորեցին չարաչար ի գլուխ զիշխանն։ Որոյ զայրացեալ անհնարին ընդ յանդգնութիւն նոցա, թուղթ առաքէ լալագին առ շեխիսլամն, և նա առ թագաւորն երթեալ ամբաստան լինի, եթէ ոչ մի թագաւոր է ի քաղաքիս, այլ երեք, չարախօսելով զսիւլէյմանէն և զխըզլար աղայսըէն։ Հրաման առաքէ թագաւորն, աքսորել զխըզլար աղասըն և զսիւլէյմանն սատակել։ Ցարհամարհել խըզլար աղասըին զհրամանն արքունի, սատակէ զնա թղթատարն և ապա զսիւլէյմանն. և զի կին եախուպ աղային քոյր էր սիւլէյմանին ուրացողի, զբռամբ ածեն և զեախուպ աղան, և սպանեալ զամենայն ինչս նորա առնուն յաւարի. և այժմ զեղբայրն ևս նորա չարչարեն անհնարին, թերևս և սպանցեն։ Գէորգ վարդապետն, որ պատրիարքն էր կոստանդնուպոլսոյ, անկաւ, և արդ նստի նալօղլու յակոբ վարդապետն։...

Ամենապատիւ հայրութեանդ
Տրուպ ծառայ
Վրթանէս վրդպ. Ասկէրեանց

Ցամի 1752
յօգոստոսի 25 ըստ նորոյն
[Կ. Պոլիս]

ՃԿԴ.

Այս թուղթը կու տայ՝ իբրև յաւելուած՝ հակիրճ ծանօթութիւններ նախընթաց մէկ երկու կարևորագոյն վաւերագիրներու մասին։

Գերյարգելոյ Աբրայ Հօրդ մերոյ տեառն տեառն
Ստեփաննոսի Վարդապետի

... մինչև ցարդ զզլար աղասուն և սուլէյմանին սատակեցելոց ցնցիւղք չարութեան և ինասու ոչ պակասին, զի մերթ ի համախոհից և արբանեկացն նոցին, ի ձեռս անկանին, ոմանք սպաննին և ոմանք չարչարին, և նոքա զորս կամին մատնեն, թէ այս ինչ մարդոյ այն ինչ գոյ, և այն ինչ մարդոյ այն ինչ. և այսպէս յամէն օր ի զուլումճընէրուն այս ինչ մարդ և այն ինչ մարդ վերցնեն առ ի քննել, և այսպէս ամենեքեան սրտադող են։